



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Էդ.Նահապետյան

Վարչական գործ N ՎԴ5/0172/05/12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06 փետրվարի 2013 թվական

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

*Նախագահող դատավոր՝
դատավոր՝
դատավոր՝*

ԳԱԼՈՒԲՍ ԴԱՐԻԲՅԱՆ
ԱՇՈՏ ԱԲՈՎՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ


մասնակցությամբ՝

Սիրանուշ Աբրահամյանի,
ներկայացուցիչ՝
Արես Թադևոսյանի,

ՀՀ Շիրակի մարզպետարանի
ի դեմս ներկայացուցիչ՝
Գեղամ Բաղդասարյանի,

Սմբատ, Մանիկ, Մարինե, Նարինե
Ալեքսանյանների,

քննելով՝ Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանի, Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյանի, Մարինե Սմբատի Ալեքսանյանի, Նարինե Սմբատի Ալեքսանյանի վերաքննիչ բողոքը՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի վճռի դեմ, որը կայացվել է N ՎԴ5/0172/05/12 վարչական գործով՝ ըստ հայցի Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի, մասնակցությամբ երրորդ անձինք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրի սպասարկման գրասենյակի և Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների՝ ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40Ա շենքի թիվ 2 բնակարանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» թիվ 70-Ա վարչական ակտն ամբողջությամբ անվավեր հռչակելու և վերացնելու և, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրի սպասարկման գրասենյակի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների անվամբ կատարված գրառումն անվավեր հռչակելու պահանջների վերաբերյալ,



1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) 2012 թվականի սեպտեմբերի 28-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանի, Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյանի, Մարինե Սմբատի Ալեքսանյանի, Նարինե Սմբատի Ալեքսանյանի կողմից բերվել են վերաքննիչ բողոք, միաժամանակ միջնորդել են պետական տուրքի վճարումը հետաձգել:

Որպես միջնորդության հիմնավորում նշել են, որ ընտանիքում որևէ մեկը չի աշխատում, սոցիալական աջակցություն կամ օգնություն չեն ստանում, չեն օգտվում «Փարոս» համակարգից, իսկ Սմբատ Ալեքսանյանն ունի առողջական լուրջ խնդիրներ:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ միջնորդությունը բավարարել է, բողոքն ընդունել է վարույթ և նշանակել քննության:

Բողոքի վերաբերյալ պատասխան է ներկայացրել Սահականուշ Սուրիկի Աբրահամյանը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքով, մասնավորապես, նշվել է հետևյալը:

Նշել է, որ Գյումրի քաղաքի նախկինում Կամո 40 շենքի, ներկայումս՝ Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը պատկանել է Ս. Ալեքսանյանի տատիկին: Նրա մահից հետո 1987թ. դիմել է թիվ 24 ԲՀՏ-ի պետ Ա. Ասատրյանին որպես ժառանգ՝ վարձակալության քարտի ձևակերպման կապակցությամբ և թիվ 1/143-87 գրությամբ տրամադրվել է դրական պատասխան: Դրանից հետո դիմել է դատարան և Լենինական քաղաքի Մոսկովյան շրջանի ժող. Դատարանի վճռով Կամո 40 շենքի թիվ 2 բնակարանի վարձակալ ճանաչվել: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ օրինականուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Կամո 40 շենքն երկրաշարժից հետո այն հասցեավորել է Կամո 40ա շենք, որը Գյումրու քաղաքապետարանը բաշխել է՝ հատկացնելով այլ անձի: Այս պարագայում բնակարանը բաշխելու ժամանակ նախ՝ Գյումրու քաղաքապետարանի սեփականատիրական իրավունքը բնակելի շենքի նկատմամբ գրանցված չի եղել, իսկ իրավունքի բացակայության դեպքում նաև չէր կարող այն բաշխել:


Երկրորդ՝ Շիրակի մարզպետարանը բնակելի շենքի նկատմամբ իրավունքները ստացել է դեռևս 2002թ., որից հետո Գյումրու քաղաքապետարանը բաշխել է բնակարանը:

Երրորդ՝ Շիրակի մարզպետարանը որպես բնակելի շենքի սեփականատեր երբևէ քաղաքացուց կամ նրա իրավահաջորդից բնակարանի նկատմամբ վարձակալ ճանաչելու դիմում չի ստացել:

Բացի դրանից հայցվորն իր պահանջում նշել է, որ հայրը, այնուհետև նաև ինքը՝ հանդիսանում են բնակարանի վարձակալներ, ինչը օրինական հիմք է բնակարանն իրենց անունով սեփականաշնորհելու համար: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Իսկ սեփականաշնորհման համար անհրաժեշտ է օրինական հիմքեր, որոնցից են առնվազն օրինական հիմքերով տրված որոշումը:

Գտնում է, որ սույն գործով վճիռ կայացնելիս Դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջը, ուշադրություն չի դարձրել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին: Իսկ Գյումրու քաղաքապետարանը չունենալով համապատասխան իրավունքներ նրանց բնակարանը հատկացրել է մեկ այլ անօթևանի: Այդ քայլով Գյումրու քաղաքապետարանը լուծել է հայցվորի հոր բնակարանի ապահովման հարցը՝ սակայն մյուս կողմից ավելացրել է ևս մեկ անօթևան ընտանիք:

Վերջինից հայցում արժարծել է հետևյալ փաստը. «... և քանի որ չունեն այն քանդելու և նորոգելու հնարավորություն, իսկ այդ պահին իրենց բնակված՝ Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը ուներ խիստ վերանորոգման կարիք, ուստի համապատասխան որոշմտությամբ Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի թիվ 70 հասցեում գտնվող տունը 2004 թվականին վաճառեց 1.200.000 ՀՀ դրամով և այդ գումարով



վերանորոգեց իրենց բնակված՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը:» /էջ 3/: Այսինքն՝ հայցվորը հստակ նշել է, որ նախկինում էլ թյուրիմացության մեջ գցելով Գյումրու քաղաքապետարանին՝ բնակելի տուն ունենալով հանդերձ, անօթևանի կարգավիճակ են ստացել ու կրկնակի բնակարանի տեր դարձել: Իսկ նրանց ընտանիքը, ով հույսով է եղել, որ Հայաստանում իր սեփական բնակարանն ունի ու այն պաշտպանվում է օրենքով, կորցրել է իր բնակարանը: Նշել է նաև, որ այսօր էլ հայցվոր՝ Ս. Աբրահամյանը ունի այլ բնակարան, ինչի պատճառով Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանի դուռը փակ է ու վերջինս այնտեղ չի բնակվում:

Դատարանը խախտել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջը:

Պատասխանող՝ Շիրակի մարզպետարանի կողմից ներկայացվել է ՀՀ ոստիկանության ԱՎԿ Գյումրու անձնագրային բաժանմունքի կողմից 2012թ. հունվարի 24-ին տրված թիվ 17(18) ձևից քաղվածքը, որով Գյումրի քաղաքի Կամո 40 շենքի թիվ 2 բնակարանում 1981թ. մինչ օրս հաշվառված են՝ Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանը և նրա ընտանիքի անդամները՝ Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյանը, Սարինե և Նարինե Սմբատի Ալեքսանյանները: Իսկ հայցվոր՝ Ս. Աբրահամյանը վիճելի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանում հաշվառվել է միայն 19.04.2012թ., հոր մահից 7 տարի անց: Եթե բավարար հիմքեր առկա էին, ապա ինչն էր խանգարում անձին հաշվառվելու իր բնակության հասցեում:

Ապացույցների ուսումնասիրման փուլում Դատարանը նաև հիմք չի ընդունել այն հանգամանքը, որ ըստ Շիրակի մարզպետարանի կողմից Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետի 2012թ. փետրվարի 2-ի տեղեկանքի՝ իրենց ընտանիքը բնակարան չի ստացել: Իսկ Սուրիկ Սահակի Աբրահամյանի մահից հետո աղջկան՝ հայցվոր՝ Ս. Աբրահամյանին բնակարան չի հատկացվել: Ավելին, վերջինս նույնիսկ ժառանգություն չի ձևակերպել ու ժառանգության իրավունքի վկայական չի ստացել բնակարանի նկատմամբ:

Հանրապետություն վերադառնալուց հետո դիմել են Շիրակի մարզպետարան և օրենքի պահանջին համապատասխան ստացել են իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակարանը: Այնուհետև, 11.05.2012թ. Շիրակի մարզպետարանի ու նրանց միջև կնքվել է «Պետական աջակցություն ցուցաբերելու մասին» թիվ 3462 պայմանագիրը: Պայմանագրի հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային բաժնի կողմից 16.05.2012թ. ստացել են թիվ 16052012-08-0111 սեփականության վկայականը:

Նշել է, որ դատաքննության ընթացքում նրանց ծանուցագիր չի ուղարկվել, որով մասնակից կդարձվեին վեճին և կարտահայտեին իրենց դիրքորոշումը:

Խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայրի 28.09.2012թ. թիվ 47/5/0172/05/12 գործով կայացված վճիռը՝ կայացնելով նոր դատական ակտ:

3. Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի կողմից ներկայացված պատասխանը


Պատասխանը, ներկայացված տեքստով:

Գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, ինչպես նաև այն բերվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115 հոդվածի և 117.2 հոդվածի 1 մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը 2012 թվականի ապրիլի 6-ին կայացրել է «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» թիվ 70-Ա որոշումը (այնուհետև նաև՝ վարչական ակտ), որի պատճառաբանությունները և իրավական հիմնավորումները հետևյալն են՝ «Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի 1952547 վկայականը և մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական

բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով.

Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2, մեկ սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել քաղաքացիներ՝ Սմբատ, Մանիկ, Նարինե, Սարինե Ալեքսանյանների հետ: Գտնում է, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի ոչ ճիշտ մեկնաբանության և սխալ կիրառման արդյունքում, որով խախտվել են նրա՝ Սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված՝ զույլբային և բնակարանային իրավունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա հայրը՝ Սուրիկ Սահակի Աբրահամյանը երկրաշարժի հետևանքով կորցրել էր իրեն պատկանող Գյումրու Պիոներական փողոցի 1-ին շենքի թիվ 38 մեկ սենյականոց բնակարանը, սահմանված կարգով հաշվառված է պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում, օգտվում է ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով սահմանված արտոնություններից (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 13.06.2003 թվականի թիվ 789 որոշման քաղվածքից, տրված 19.01.2012 թվականին) Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 789 որոշմամբ՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը զբաղեցնելու (վարձակալության հանձնելու) իրավունքով հանձնվել է հորը՝ Սուրիկ Սահակի Աբրահամյանին, նշված որոշման հիման վրա և այդ պահին գործող՝ 1982 թվականի փետրվարի 11-ից մինչև 2005 թվականի հոկտեմբերի 4-ը ուժի մեջ եղած Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ բնակարանային օրենսգրքը) 49-րդ հոդվածի պահանջների համաձայն տրվել է նաև «Միասնական օրդեր» թիվ 2, որը հանդիսացել է օրենքով պահանջվող վարձակալ հանդիսանալու և օգտագործման ու տիրապետելու իրավունքը հավաստող, բնակելի տարածությունը զբաղեցնելու օրենքով սահմանված միակ հիմքը, իսկ նույն հոդվածի երկրորդ պարբերությունը սահմանում էր՝ օրդերը կարող է տրվել միմիայն ազատ, մեկուսացված բնակելի տարածության համար: Ուժը կորցրած՝ ՀՀ բնակարանային օրենսգրքի իրավագործությունը՝ տվյալ 2003 թվականին վերաբերվող իրավահարաբերությունների կարգավորման համար պայմանավորված է՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ գլխի, մասնավորապես 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությամբ՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կախակտնից ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսպիսով հայրը հանդիսանալով վարձակալ 13.06.2003 թվականից նրա և նրա երկու դուստրերի հետ համատեղ բնակվել են՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանում, վարելով ընդհանուր տնտեսություն, իսկ հայրիկի մահից հետո (25.06.2005 թվական, մահվան վկ. ԱՆՈ41592) նրանք շարունակել են բնակվել նշված հասցեում, պատշաճ կարգով կատարելով վարձակալի պարտականությունները՝ վճարել կոմունալ վճարներ և բնակված /ապացույց՝ «Վել-Մանո» համատիրության նախագահ Մ. Հակոբյանի 16.04.2012 թվականի տեղեկանքը և 28.07.2003 թվականից մինչև 05.03.2012 թվականը բնակվարձի և կոմունալ վճարների վճարման անդորրագրերը: /պատճենները կցվում են/ վարձակալի իրավունքներն ու պարտավորությունը նրան փոխանցվել է ինչպես վարձակալի ժառանգ հանդիսանալու հանգամանքով, այնպես էլ վարձակալի հետ համատեղ բնակվող ընտանիքի չափահաս անդամ հանդիսանալու հանգամանքով:



վարձակալի իրավունքներն ու պարտավորությունը նրան ժառանգ հանդիսանալու հանգամանքով փոխանցվելու իրավական հիմք է համարվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածի 2-րդ մասով: Վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին մասը, 1215-րդ հոդվածի 1-ին մասը, 1216-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը և 1225-րդ հոդվածի 5-րդ մասը, 1188-րդ հոդվածի 1-ին մասը և նշել է, որ հոր՝ մահվան օրվանից սկսած, նա փաստացի տիրապետել և կառավարել է հոր

վարձակալության իրավունքով պատկանող բնակարանը, ձեռնարկել է միջոցներ գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ունեցություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, ինչպես նաև իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իրենց համար վերաբերելի և թույլատրելի ապացույց է հանդիսանում՝ „Վել-Ման“ համատիրության նախագահ Ս. Հակոբյանի 16.04.2012 թվականի տեղեկանքը և 28.07.2003 թվականից մինչև 05.03.2012 թվականը բնակվարձի և կոմունալ վճարների վճարման անդորրագրերը, որոնց պատճենները կցված են: Նշել է նաև, որ նրան սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի, Ջիվանու փողոցի թիվ 70 հասցեում գտնվող տունը 2004 թվականին վաճառեց՝ 1.200.000 ՀՀ դրամով և այդ գումարով վերանորոգել է նրա բնակված՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40 ա շենքի թիվ 2 բնակարանը, որը երկրաշարժի հետևանքով դարձել էր 4-րդ աստիճանի վթարային (համաձայն ՀՀԸՆ II-6.02.2006 նորմերի աղյուսակ 24-ի), բնակության համար ոչ պիտանի, ինչպես նաև ըստ մասնագիտական տեղեկանքի (կցվում է) կառույցը վերականգնման ենթակա չէր և հարկավոր էր քանդել, և քանի որ չունեի այն քանդելու և նորը կառուցելու հնարավորություն, իսկ այդ պահին նրա բնակված՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը ուներ խիստ վերանորոգման կարիք, ուստի ղեկավարվելով ողջամտությամբ՝ Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի թիվ 70 հասցեում գտնվող տունը 2004 թվականին վաճառեց՝ 1.200.000 ՀՀ դրամով և այդ գումարով վերանորոգել է իր կողմից բնակված՝ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը: Գտնում է, որ նման որոշումը ոչ միայն միակ ողջամիտ լուծումն էր, այլև միակ հնարավորությունն էր որպեսզի ապահովվեր նրա ընտանիքին որպես իրավունք՝ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով ամրագրված իրավանորմը, համաձայն, որի՝ Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Վերջինս արդարացված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տեսանկյունից, մասնավորապես 21-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերը:

Վերը նշված փաստերը և դրանք կարգավորող իրավանորմերը անժխտելի են դարձնում այն, որ նրա հոր մահից հետո, օրենքի ուժով ժառանգել և ընդունել է հոր ժառանգությունը, որի զանգվածի բաղկացուցիչն է կազմում նաև բնակարանի վարձակալության իրավունքը և այն պատկանում է նրան հոր մահվան օրվանից սկսած, անկախ այդ իրավունքի պետական գրանցման հանգամանքից: Վարձակալի իրավունքներն ու պարտավորությունը նրան փոխանցվելու համար իրավական հիմք է հանդիսանում նաև՝ վարձակալի հետ համատեղ բնակվելու և նրա ընտանիքի անդամը հանդիսանալու փաստը, այդ հանգամանքը օրենքի ուժով պարտավորեցնում էր կատարել վարձակալի պարտավորությունները, ինչպես նաև օգտվել նրա իրավունքներից հետևյալ իրավական հիմնավորմամբ՝ համաձայն ՀՀ բնակարանային օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում են բոլոր պարտականությունները, ընտանիքի չափահաս անդամները վարձակալի հետ համապարտ գույքային պատասխանատվություն են կրում հիշյալ պայմանագրից բխող պարտավորություններով:

Ինչ վերաբերում է ընտանիքի անդամ հանդիսանալուն, ապա համաձայն ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի անդամների թվին են պատկանում վարձակալի ամուսինը, նրանց երեխաները և ծնողները: Այլ անձիք կարող են վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե նրանք բնակվում են վարձակալի հետ համատեղ և նրա հետ վարում են ընդհանուր տնտեսություն: Եթե այս հոդվածի առաջին մասում նշված քաղաքացիները դադարել են վարձակալի ընտանիքի անդամներ լինելուց, բայց շարունակում են բնակվել զբաղեցրած տարածությունում, ապա նրանք նույնպիսի իրավունքներ ու պարտականություններ ունեն, ինչպիսին վարձակալն ու նրա ընտանիքի անդամները: Այնպես է, որ համաձայն ՀՀ բնակարանային օրենսգրքի՝ բնակտարածության նկատմամբ վարձակալի հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամի վարձակալի իրավունքներից օգտվելու և պարտականությունները կատարելու պարտավորությունը լիիրավ ծագում էր բացառապես՝ ընտանիքի անդամ հանդիսանալու և համատեղ բնակվելու փաստով, որտեղ որպես պայման նախատեսված չէ հաշվառված լինելու հանգամանքը, որը իրավաբանական նշանակություն չունի նաև ըստ քաղաքացիական օրենսգրքի՝ անշարժ գույք վարձակալված քաղաքացու մահվան դեպքում վարձակալության պայմանագրով նրա


իրավունքները և պարտականությունները ժառանգին փոխանցվելու վերաբերյալ
իրավանորմերի կիրառման համար, սակայն այնուհանդերձ նա 19.04.2012 թվականին
հաշվառվել է նշված բնակարանում: Ի նկատի ունենալով վերը շարադրված փաստերը և
դրանց վերաբերյալ իրավական հիմնավորումները անժխտելի է, որ նա օրենքի ուժով,
հանդիսանում է Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի
վարձակալության կողմ, տարիներ շարունակ կրել է վարձակալի բոլոր
պարտականությունները և օգտվել նրա բոլոր իրավունքներից և համաձայն ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի՝ 606-րդ և 607-րդ հոդվածների, 163-րդ հոդվածի 1-ին մասի և
170-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ չհանդիսանալով սեփականատեր ունի զբաղեցրած
բնակարանը օգտագործելու գույքային իրավունք, ինչպես նաև տիրապետման իրավունք՝ որը
գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:
Ներկայացված փաստերը հիմնավորում են, որ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ
2 բնակարանը որպես գույք, օրինական հիմքերով ծանրաբեռնված է նրա գույքային
(տիրապետման և օգտագործման) իրավունքներով և միաժամանակ հանդիսանում է նրա
ընտանիքին օրենքով սահմանված կարգով հատկացված բնակարանը, նշված իրավունքները
պատկանում են նրան և դադարեցված կամ վերացված չեն, ինչպես նաև չկա դրանք
դադարեցնելու կամ վերացնելու օրենքով սահմանված ոչ մի հիմք, ուստի Հայաստանի
Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի «Աղետի գոտու
վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով
ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի
թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով
պայմանագիր կնքելու մասին» N 70-Ա որոշումը ուղղակիորեն խախտում են նրա գույքային և
բնակարանային իրավունքները, որոնք երաշխավորված են՝ Մարդու իրավունքների և
հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին
մասի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ և 13-րդ հոդվածների, 23-րդ և
25-րդ հոդվածների 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի և 48-րդ հոդվածի 3-րդ
կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ, 11-րդ, 21-րդ, 289-րդ,
436-րդ, 606-րդ, 607-րդ, հոդվածներով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի կողմից նրան
հասցեագրված՝ 2012 թվականի մայիսի 2-ի N1885-12, գրությունից տեղեկացել է, որ Գյումրի
քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը, որտեղ իրենք բնակվում են 2003
թվականից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի
N 70-Ա որոշմամբ անհատույց համատեղ սեփականության իրավունքով հատկացվել է նշված
բնակարանի նախկին բնակիչ Սմբատ Ալեքսանյանի ընտանիքին: Հաշվի առնելով, որ նշված
որոշմամբ խախտվում են նրա իրավունքները 17.05.2012 թվականին՝ հիմք ընդունելով
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք 69-ից 72-րդ
հոդվածների պահանջները, ՀՀ Շիրակի մարզպետին ներկայացրել է վարչական բողոք
խնդրել՝ ղեկավարվելով նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա», կետի, 64-րդ հոդվածի,
73-րդ հոդվածի, 75-ից 77-րդ հոդվածների պահանջներով՝ հարուցել վարչական վարույթ,
քննարկել վարչական բողոքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
ընդունած 2012 թվականի ապրիլի 6-ի N70-Ա վարչական ակտի իրավաչափության
լեռնակյունից, ընդունելով ըստ էության որոշում՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու և
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի N70-Ա
որոշումը անվավեր ճանաչելու մասին: Միաժամանակ խնդրել է, ղեկավարվելով
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի և
74-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Կասեցնել Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի N70-Ա որոշման կատարումը: Ծանոթանալու
Շիրակի մարզպետի վերցնելու նպատակով, նրան տրամադրել վարչական մարմնի
տրամադրության տակ եղած գործի բոլոր նյութերը: Ի նկատի ունենալով, որ առ այսօր,
վարչական մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»
ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ վարչական ակտի գործողությունը
չկասեցնելու վերաբերյալ պատճառաբանված որոշում չի ընդունվել, սակայն նաև չի
իրականացվել անհրաժեշտ գործողություն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցում իրականացնող պետական պետական մարմին չի ներկայացվել




համապատասխան գրություն, վարչական ակտի օրենքի ուժով կասեցման վերաբերյալ, այդ պատճառով կարող է իրականացվել ոչ իրավաչափ վարչարարություն՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցում, կասեցված վարչական ակտի հիմքով, որը լրացուցիչ խոչընդոտներ կատեղծի բողոքարկման արդյունքում ընդունված վարչական, կամ դատական ակտի կատարման համար: Բացի այդ առ այսօր վարչական մարմնը իրեն չի ծանուցել վարչական վարույթի հարուցման, լսումների իրականացման տեղի, օրվա, ժամի և պայմանների մասին, որը վարչական մարմինը պարտավոր էր կատարել վարչական վարույթ հարուցելու օրվանից՝ 18.05.2012 թվականից հաշված եռօրյա ժամկետում, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հոդվածի 2-րդ մասի և 35-րդ հոդվածի պահանջները վարչական մարմնի կողմից թույլ տրված օրենքի խախտումները էականորեն սահմանափակում են իր իրավունքների պաշտպանության կազմակերպման հնարավորությունը և օբյեկտիվ կասկած է հարուցում հետագա վարչարարության արդյունավետության հետ կապված, ուստի նախընտրում է օգտվելով օրենքով իրեն ընձեռնված հնարավորությունից, իրավունքների հետագա պաշտպանությունը իրականացնել դատական կարգով: Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 19-րդ հոդվածը և 20-րդ հոդվածի 4-րդ մասը և այն, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» N 70-Ա որոշմամբ, խախտվել են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված նրա իրավունքները, առաջնորդվելով՝ Հայաստանի հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների, Սարգու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին փոփոխված 11-րդ արձանագրությամբ» միջազգային պայմանագրի 6*3 հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի՝ 1-ին, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «ա», ենթակետի, 4-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ և 13-րդ հոդվածների, 23-րդ և 25-րդ հոդվածների 1-ին մասերի, 64-րդ, 65-րդ և 70-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 72-ից 75-րդ հոդվածների պահանջներով, ներկայացնում է վիճարկման հայց: Ինչպես փաստեց և հիմնավորվեց հայցվորի մասին 2-րդ գլխում, վարչական մարմինը վարչական ակտ ըդունելիս խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իր իրավունքները, որի պարագայում համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա», կետի վարչական ակտը համարվում է ոչ իրավաչափ և անվավեր՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու հետևանքով: Վարչական մարմինը վարչական ակտի ընդունման համար որպես առաջնային իրավական հիմք վկայակոչել է «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը միանշանակ չի կարող կիրառվել տվյալ դեպքում, հետևյալ պատճառաբանությամբ.

ա) «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածները սահմանում են «Պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների մասնավորեցումը կատարվում է տվյալ բնակարանի վարձակալի կողմից համապատասխան մարզպետին (երևան քաղաքում՝ քաղաքապետին) ուղղված դիմումի հիման վրա՝ այդ բնակարանում բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող չափահաս անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում: Պետական բնակարանային ֆոնդի բնակարանները մասնավորեցվում են տվյալ բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց անունով՝ որպես նրանց ընդհանուր համալիր սեփականություն:



Ակնառու է, որ պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների մասնավորեցման պարտադիր պայման է հանդիսանում՝ դիմում ներկայացնելու պահին տվյալ բնակարանի վարձակալ հանդիսանալը և նրա կողմից մարզպետին համապատասխան դիմում ներկայացնելը, ինչպես նաև բնակարանի մասնավորեցումը տվյալ բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց անուանով կատարելը: Ըստ օրենքի այդ բնակարանի վարձակալ հանդիսանում է ինքը և դրա օգտագործման իրավունքը օրենքով վերապահված է նրա ընտանիքին, ինչն էլ նրանք բարեխղճորեն կատարում են, ինչ վերաբերվում է Ալեքսանյանների ընտանիքին, ապա նրանք վարձակալ չեն հանդիսանում և չունեն օգտագործման իրավունք, ավելին եթե անգամ պայմանականորեն ենթադրեն, որ նշված բնակարանը ծանրաբեռնված չէ որևէ մեկի իրավունքներով և նախքան սեփականաշնորհելը այդ բնակարանը հանձնվում է վարձակալության, որպեսզի ձևականորեն ապահովվի վերը նշված օրենքի պարտադիր պայմանը, ապա անգամ այս պարագայում 2012 թվականի դրությամբ որևէ իրավական հիմք չկա տվյալ բնակարանի վերաբերյալ՝ որպես պետական աջակցություն, վարձակալության հանձնելու պայմանագիր կնքելու համար, քանի որ այդ հարաբերությունները կարգավորվում են՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման» կարգով սահմանված իրավանորմերով, որի 1-ին կետում, մինչև 2002 թվականի նոյեմբերի 21-ը ամրագրված է եղել «վարձակալության հանձնելու (հատկացնելու)» բառերը, այդ կետը փոփոխության է ենթարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N1935-Ն որոշմամբ՝ որտեղ՝ «վարձակալության հանձնելու (հատկացնելու)» բառերը փոխարինվել է «քաղաքացիների համաձայնությամբ նրանց անհատույց սեփականության իրավունքով հատկացնելու» բառերով, այսինքն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի 1935-Ն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից, աղետի գոտու բնակավայրերում պետական միջոցներով վերակառուցված բնակարանները որպես պետական աջակցություն չեն կարող տրամադրվել վարձակալական հիմունքներով, ուստի Ալեքսանյանների ընտանիքը որևէ իրավաչափ ձևով 2012 թվականին չի կարող ձեռք բերել նշված բնակարանի վարձակալի կարգավիճակ և որպես վարձակալ հանդես գալ «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավագործության տիրույթում: Այստեղ նույնպես անհերքելի է, որ վարչական մարմինը վարչական ակտ ընդունելիս կիրառելով՝ «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը թույլ է տվել օրենքի խախտում և այդ վարչական ակտը՝ համաձայն «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համարվում է ոչ իրավաչափ և անվավեր՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու հետևանքով: Վարչական ակտ ընդունելիս վարչական մարմինը վկայակոչել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ», ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիների և բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշման դրույթներով սահմանված նորմերը, որոնք վերլուծելով, գտնում է, որ նշված իրավանորմերը կիրառելի չեն այս դեպքում, և դրանց ոչ ճիշտ մեկնաբանության արդյունքում վարչական մարմինը ընդունել է ոչ իրավաչափ վարչական ակտ:



Մասնավորապես նախ վերլուծել է 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 11-րդ կետերը և 12-րդ կետի «բ», ենթակետը: Սույն կարգով կարգավորվում է աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդում բնակարան արտահերթ ստանալու


իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և այդ բնակարանները քաղաքացիների համաձայնությամբ նրանց անհատույց սեփականության իրավունքով հատկացնելու կարգը:

Սեփականության իրավունքով հատկացվող բնակարաններից մեկ տարվա ընթացքում արված առաջարկություններից հրաժարվելու դեպքում քաղաքացիները կորցնում են տվյալ բնակարանը ստանալու իրենց իրավունքը:

Եթե հաշվառման մեջ գտնվող քաղաքացին մշտական բնակության է մեկնել այլ վայր, մահացել է կամ այլ հիմքերով կորցրել է հաշվառման մեջ մնալու իրավունքը, ապա նրա հետ միասին հաշվառման վերցված նրա ընտանիքի անդամների համար պահպանվում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, եթե չեն վերացել տվյալ ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող համարվելու հիմքերը:

Քաղաքացիները հաշվառումից հանվում են, եթե՝ բ) հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր:

Նախ անհրաժեշտ է փաստել, որ դեռ 2003 թվականին, երբ Գյումրու քաղաքապետի որոշմամբ բաշխվել է պետական աջակցության միջոցներով վերակառուցված կամ փողոցի 40ա շենքի բնակարանները, նույն որոշմամբ տվյալ շենքում գրանցում ունեցող, սակայն փաստաթղթեր չներկայացրած քաղաքացիներին 2 ամիս ժամանակ է տրվել, որպեսզի ներկայանան որից հետո բնակարանները վերաբաշխվել են օրինական հիմքեր ունեցող այլ քաղաքացիների /հիմք քաղվածք Գյումրու քաղաքապետի 13.06.2003 թվականի թիվ 789 որոշումից, կցված է/ Ալեքսանյանների ընտանիքը չի ներկայացել, այլ վայր բնակության փոխադրվելու պատճառով (տեղեկությունը հավաստի է և Ալեքսանյանները չեն ժխտում այդ փաստը), այդ է հուշում նաև այն, որ նրանք ի հայտ են եկել միայն 2012 թվականին, խելահեղության կանխավարկածից դուրս կլինի հավատալ, որ քաղաքացին գտնվելով նույն բնակավայրում 2003 թվականից մինչև 2012 թվականը տեղյակ չէ, որ իր նախկին շենքը վերակառուցվել է, և որևէ միջոց ձեռք չառնի այնտեղ բնակարան ստանալու համար: Այս պարագայում Ալեքսանյանների ընտանիքը համաձայն ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի՝ 1-ին կետի՝ մեկ տարուց ավել արված առաջարկությունը չընդունելու հիմքով կորցրել է բնակարանը ստանալու իրավունքը, ինչպես նշվեց քաղաքապետի հրապարակային առաջարկությունը մնացել է անպատասխան, այսինքն հրավարանական առումով քաղաքապետի հրապարակային օֆերտային պատասխանվել է լուրջամբ, որը ակցեպտ չէ: Բացի այդ ըստ նշված կարգի 11-րդ կետի և 12-րդ կետի «բ» ենթակետի՝ Ալեքսանյանների ընտանիքը եթե անգամ հաշվառված լինեին պետք է հաշվառումից հանվեին, այլ վայր մշտական բնակության տեղափոխված լինելու հիմքով, որը ըստ ՀՀ օրենսդրության 182 օր և ավելին է: Նշել է, որ նախ 2003 թվականին նշված բնակարանը արդեն իսկ հատկացվելով նրա հորը, ծանրաբեռնվել է այլոց իրավունքներով և դադարել է դասվել պետական աջակցության միջոցներով վերակառուցված և որպես պետական աջակցություն տրամադրման ենթակա բնակարանների շարքին և այդ կարգավիճակի վերականգնման համար ոչ մի իրավական հիմք չկա, թեկուզ և հոր մահի հետո պայմանականորեն անտեսվեր իր վարձակալ հանդիսանալու հանգամանքը, այսինքն գոյություն չունի որևէ իրավական ակտ, որով սահմանվի՝ պետական աջակցության միջոցներով վերակառուցված և որպես պետական աջակցություն մեկ անգամ տրամադրված լինելու փաստով կարգավիճակը փոխած բնակարանի կարգավիճակի վերականգնման դեպքեր, կամ հիմքեր: Այդպիսի իրավական ակտի բացակայությունը կաշկանդում է պետական մարմիններին և պաշտոնատար անձանց իրենց լիազորությունները ինքնիրավ իրականացնելուն, քանի որ ըստ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքով: Այդ է փաստում նաև տվյալ ոլորտում ՀՀ կառավարության լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավար հանդիսացող ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 03.04.2012 թվականին ՀՀ Երևանի մարզպետին ուղղված գրությունը (պատճենը կցվում է) համաձայն որի՝ «Գյումրու քաղաքի կամ փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի հատկացումն իրականացվել է Գյումրու քաղաքապետի 2003 թվականի մարտի 13-ի թիվ 789 որոշմամբ: ՀՀ քաղաքաշինության նախարարը իր կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների բաշխման և հատկացման գործառնություններն իրականացնում է



Իմփխտ
րուծմեթո
ցումեխոցողոյ
նիւմ 7 յալցոյ

մայնքների ղեկավարների կողմից հաստատված հերթացուցակների
մ ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու
լպատասխանության արդյունքներով՝ սկսած 2008 թվականից: Այդ
կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի 1402-Ն որոշման
ատված կանոնակարգով վերը նշված հանձնաժողովին վերապահված
ն իրականացված ծրագրերի շրջանակներում կառուցված և ամրացված
քերի բնակարանների բաշխման և հատկացման իրավասություն»:

սմանքը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության
! թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր
սն շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված

պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի
թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման
2-րդ կետի իմպերատիվ պահանջով. «2. Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու,
Արագածոտնի և Տավուշի մարզայե տներին՝ պետական աջակցություն ցուցաբերելու
վերաբերյալ համապատասխան պայմանագրերը կնքել պետական աջակցության միջոցով
կառուցված բնակելի տների շինարարության ավարտի փաստագրումից անմիջապես հետո»:
Ակնհայտ է, որ պայմանագրերը կնքելու պարտավորությունը իրավասու մարմիններին
պարտադրված է պետական աջակցության միջոցով կառուցված բնակելի տների
շինարարության ավարտի փաստագրումից անմիջապես հետո, և ոչ մի կերպ չի կարելի
հիմնավորել, որ 2003 թվականից հաշված 2012 թվականը կարող է համարվել անմիջապես,
ուստի ի թիվս վերը բերված այլ հիմնավորումների այս փաստը նույնպես կաշկանդում է
վարչական մարմինն վկայակոչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002
թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1935-Ն որոշումը: Վերը շարադրվածը ամբողջությամբ
փաստում է, որ վարչական մարմինը՝ 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա վարչական ակտը
ընդունելիս հաշվի չի առել մի շարք փաստական հանգամանքներ, որոնք իրավական
առումով համարվում են էական տվյալ վարչական ակտի ընդունման իրավաչափության
տեսանկյունից, ինչպես նաև այդ փաստերը բացառում են վարչական ակտի ընդունման
համար կիրառված իրավական ակտերի կիրարկման հնարավորությունը, մասնավորապես. 1.
Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Սահակյանուշ Սուրիկի Արահամյանը
հանդիսանում է Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի վարձակալը,
այդ բնակարանը ծանրաբեռնված է նրա իրավունքներով և տվյալ վարչական ակտը
ուղղակիորեն խախտում է նրա գույքային և բնակարանային իրավունքը:

Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Ալեքսանյանների ընտանիքը չի
հանդիսանում Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի վարձակալ, որը
պարտադիր պայման է «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց
մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման համար
(իրավական հիմնավորումները ներկայացրել է հայցադիմումի 5-րդ գլխի 2-րդ կետում):

Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա
շենքի թիվ 2 բնակարանը 2003 թվականին հատկացված լինելու փաստով փոխել է իր
կարգավիճակը և այլևս չի դասվում պետական աջակցության միջոցների հաշվին ամրացված
և որպես պետական աջակցություն տրամադրվող բնակարանների շարքում:

Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա
շենքի շինարարությունը և նրա փաստագրումը ավարտվել է 2003 թվականին, իսկ
պայմանագրերը կնքելու պարտավորությունը իրավասու մարմիններին պարտադրված է
պետական աջակցության միջոցով կառուցված բնակելի տների շինարարության ավարտի
փաստագրումից անմիջապես հետո, որը 2012 թվականը չէ:

Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Ալեքսանյանների ընտանիքը չի
ընդունել Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հրապարակային առաջարկությունը և մեկ
րաբար ավել արված առաջարկությունը չընդունելու հիմքով կորցրել է բնակարանը
ստանալու իրավունքը:

Վարչական մարմինը հաշվի չի առել այն փաստը, որ Ալեքսանյանների ընտանիքը՝ այլ
բնակավայր բնակության փոխադրվելու պատճառով կորցրել է երկրաշարժի հետևանքով
անօթևան համարվող և բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող
քաղաքացիների հաշվառման ցուցակում գտնվելու իրավունքը (իրավական
հիմնավորումները ներկայացրել է հայցադիմումի 5-րդ գլխում):



Այսպիսով վարչական մարմինը վարչական ակտը ընդունելիս խախտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8*1 հոդվածի 1-ին մասի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 1-ին մասի, 25-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածը և 48-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 11-րդ, 21-րդ, 289-րդ, 436-րդ, 606-րդ, 607-րդ հոդվածները, ինչպես նաև սխալ է մեկնաբանվել և սխալ կիրառել՝ «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և դրա կիրարկումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1935-Ն, 1995 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 116 և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի ընդունած 2012 թվականի ապրիլի 6-ի N 70Ա վարչական ակտը ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանման հետևանքով, իսկ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի „ա,“ կետի այդ ոչ իրավաչափ վարչական ակտը համարվում է անվավեր, հայցվորը խնդրել է դատարանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա ոչ իրավաչափ վարչական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելը վերացնել:

Շարադրվածի հիման վրա գտնում է, որ երրորդ անձանց կողմից բերված վերաքննիչ բողոքը անհիմն է և խնդրում է այն մերժել՝ ուժի մեջ թողնելով ՀՀ վարչական դատարանի 29 սեպտեմբերի 2012թ. վճիռը:

4. գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար եական նշանակություն ունեցող փաստերը և վերաքննիչ դատարանի վերլուծությունը և եզրահանգումները

Սույն գործով հայցվորը խնդրել է ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40Ա շենքի թիվ 2 բնակարանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» թիվ 70-Ա վարչական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչել և վերացնել, և որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրի սպասարկման գրասենյակի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների անվամբ կատարված գրառումը:

Դատարանը բավարարել է հայցը, քանի որ գտել է, որ վիճարկվող որոշումը կայացվել է մի շարք օրինադրույթների խախտմամբ:

Բողոքաբերը գտնում է, որ Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջը և բազմակողմանի չի հետազոտել գործով հավաքված ապացույցները:

Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով գործով հավաքված ապացույցները, գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես՝ գործի նյութերում առկա 13.06.2003թ. Գյումրու քաղաքապետի հ. 789 որոշման հիման վրա տրված հ.2 միասնական օրդերի համաձայն՝ ք. Գյումրի Կամո փ. 40Ա շենքի 2-րդ բնակարանի ընտանիքը նշված է մեկ անձով 1926թ. ծնված Սուրիկ Աբրահամյանը /գ.թ.39/:

Սուրիկ Աբրահամյանը մահացել է 2005 թվականի հունիսի 25-ին /մահվան վկայական հ. ԱԱ 041592/:

Սույն գործով հայցվոր, Սուրիկ Աբրահամյանի դուստրը՝ Ս. Աբրահամյանը, ըստ ներկայացված ամօձագրի պատճենի՝ վիճելի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանում հաշվառվել է որպես «բնակվող» միայն 19.04.2012թ., հոր մահից 7 տարի անց /գ.թ. 41/:

ՀՀ բնակարանային օրենսգրքի /ուժը կորցրել է 04.10.2005թ./ 49-րդ հոդվածի համաձայն օրդերը միայն հանդիսանում է բնակելի տարածությունն զբաղեցնելու հիմք: Սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, բնակելի տարածության օրդերի հիման վրա, վարձատուի՝ բնակարանային-շահագործման

կազմակերպության (իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ համապատասխան ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության) և վարձակալի՝ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 660-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության պայմանագրով մի կողմը՝ բնակելի տարածության սեփականատերը կամ նրա լիազորած անձը (վարձատու), պարտավորվում է վճարի դիմաց մյուս կողմի (վարձակալի) տիրապետմանը և օգտագործմանը հանձնել բնակելի տարածություն:

Նույն օրենսգրքի 663-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Վերոգրյալի վերլուծությունից հետևում է, որ օրդերի հիման վրա կարող է կնքվել վարձակալության պայմանագիր, և այդ պայմանագրից ծագած իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի և Սուրիկ Աբրահամյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր: Այսինքն՝ Սուրիկ Աբրահամյանը Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանի վարձակալ չի հանդիսացել:

Բողոքաբերը նշել է. «Գյումրի քաղաքի նախկինում Կամո 40ա շենքի, ներկայումս՝ Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը պատկանել է՝ Ս. Ալեքսանյանի տատիկին: Նրա մահից հետո 1987թ. դիմել է թիվ 24 ԲՇՏ-ի պետ՝ Ա. Ասատրյանին որպես ժառանգ՝ վարձակալության քարտի ձևակերպման կապակցությամբ և թիվ 1/143-87 գրությամբ տրամադրվել է դրական պատասխան: Դրանից հետո դիմել է դատարան և Լենինական քաղաքի Մոսկովյան շրջանի ժող. Դատարանի վճռով Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանի վարձակալ ճանաչվել: »:

Գործի նյութերում առկա է ՀՀ ոստիկանության ԱՎՎ Գյումրու անձնագրային բաժանմունքի կողմից 2012թ. հունվարի 24-ին տրված թիվ 17(18) ձևից քաղվածը, որով Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանում 1981թվականից հաշվառված են՝ Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանը և նրա ընտանիքի անդամները՝ Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյան, Մարինե և Նարինե Սմբատի Ալեքսանյանները /գ.թ. 66/:

2006 թվականի հունիսի 14-ին տրված հ. 1952547 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ ք. Գյումրի Կամո հ. 40ա շենքի նկատմամբ գրանցվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը՝ իրավունքների պետական գրանցման միասնական 08-001-1-3 մատյանի 000043 համարի տակ /գ.թ.64/:

03.04.2012թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված գրության համաձայն, որով պատասխանել են ՀՀ Շիրակի մարզպետ Ա. Գիգիրյանի 2012 թվականի մարտի 22-ի հ. 01/1153-12 գրությանը, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը չի առարկել, որպեսզի ամրացված-վերականգման արդյունքում նոր հասցե ստացած՝ Գյումրի քաղաքի Կամոյի փ., հ.40ա շենքի թիվ 2 բնակարանը նախկին բնակիչ Մանիկ Ալեքսանյանի ընտանիքին հատկացվի /գ.թ.44/:

ՀՀ Շիրակի մարզպետի 06.04.2012 թվականի հ. 70-Ա «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» որոշման համաձայն. «Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1952547 վկայականը և ղեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի գիտություններով.



Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված Գյուրի քաղաքի Կամո փողոցի 40 ա շենքի թիվ 2, 1 սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝ Ալեքսանյան Սմբատ Մարտունիկի, Ալեքսանյան Մանիկ Ֆրունզեի, Ալեքսանյան Մարինե Սմբատ, Ալեքսանյան Նարինե Սմբատ» /գ.թ. 24/:

ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի՝ աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները քաղաքացիներին հատկացվում են անհատույց, սեփականության իրավունքով՝ համապատասխան մարզպետի և քաղաքացու միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ համապատասխան պայմանագրի հիման վրա:

Վերը բերված վիճարկվող որոշման հիման վրա 2012 թվականի մայիսի 11-ին՝ Ալեքսանյանների հետ կնքվել է Գյուրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու վերաբերյալ պետական աջակցություն ցուցաբերելու մասին պայմանագիր /գ.թ. 21-23/:

Բնակարանի նկատմամբ Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանի, Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյանի, Մարինե Սմբատի Ալեքսանյանի, Նարինե Սմբատի Ալեքսանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը 2012 թվականի մայիսի 16-ին ստացել է պետական գրանցում և տրվել է հ. 16052012-08-0111 անշարժ գույքի սեփականությանը իրավունքի պետական գրանցման վկայականը /գ.թ. 65/:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի պահանջներին համապատասխան և հիմքեր չկան այն անվավեր ճանաչելու համար, քանի որ Ալեքսանյանների ընտանիքին բնակարանը հատկացվել է իրավասու մարմնի՝ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից և այդ բնակարանի նկատմամբ որևէ մեկի, որևէ իրավունք (սեփականության, վարձակալության, օգտագործման) օրենքով սահմանված կարգով գրանցված չէ:

Վերոգրյալից հետևում է, որ հիմնական պահանջը ենթակա է մերժման, հետևաբար մերժման է ենթակա նաև ներկայացված ածանցյալ պահանջը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ստորադաս դատարանի դատական ակտ փոփոխելու վերաքննիչ դատարանի լիազորությունը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանը



ՈՐՈՇԵՑ

Սմբատ Մարտունիկի Ալեքսանյանի, Մանիկ Ֆրունզեի Ալեքսանյանի, Մարինե Սմբատի Ալեքսանյանի, Նարինե Սմբատի Ալեքսանյանի վերաքննիչ բողոքը բավարարել՝ բեկանել N

ՎԴ5/0172/05/12 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը և այն փոփոխել:

Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի, մասնակցությամբ երրորդ անձինք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրի սպասարկման գրասենյակի և Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների՝ ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40Ա շենքի թիվ 2 բնակարանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին» թիվ 70-Ա վարչական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու և վերացնելու և, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրի սպասարկման գրասենյակի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների անվամբ կատարված գրառումն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ, մերժել:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանից, հօգուտ ՀՀ պետական բյուջեի, գանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես բողոք բերելու համար հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:


ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ



Հայաստանի Հանրապետության սահմանված ժամկետում սույն որոշումը « բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ

ԴԱՏԱՎՈՐ



վարչական

ԴԱՏԱՎՈՐ



դատավարության օրենսգրքով 2013 թվականի դրությամբ չի

Գ. ՂԱՐԻԲՅԱՆ